ընդգրկվում են ոչ հատկապես միայն Սևաքարից (Ղարադաղից), այլև ընդհանրապես Պարսկաստանի այլ գավառներից ներգաղթածները։ Նոր բնակիչներ են եկել Թավրիզի մոտակայքից (Անգեղակոթ, Ուզ), Սալմաստից, Մարաղայից, Խոյից (Շաղաթ, Բալաք, Մազրա, Թազագյուղ, Ալելու, Սիսիան (Ղարաքիլիսա), Կալաջըղ, Լծեն)։ Սրանք Արաքսը անցնելուց հետո փոխադրվել են Արարատյան դաշտով՝ իրենց հետ քաշելով ընտանիքներ նաև Նախիջևանից (Տոլորս, Գետաթաղ)։ Ղարադաղից գաղթողները զետեղվել են Շիկահողում, Ծավում, Եղվարդում և Բասուտի ու Ողջի գետի (Օխշիչայի) գետահովիտների գյուղերում, որտեղից մասնակի հեռացել էին թուրքերը՝ օգտվելով նույն Թուրքմենչայի դաշնագրության այն հոդվածով, որով նաև թույլ էր տրվում ռուսական կառավարության ձեռքի տակ ապրել չցանկացող բնակիչներին հեռանալ ռուսական սահմաններից։

Տաթևի մելիք Մանուչարն ահագին ջանք թափեց պարսիկների հանկարծակի հարձակման ժամանակ ավերված գյուղերի վերականգնման համար և ամենայն աջակցություն էր ցույց տալիս կառավարության միջոցառումներին։ Նա կրկին վերաբնակեցրեց իր տան սեփականություն կազմող Սվարանց գյուղը այնտեղից փախած բնակիչներին և բերավ նաև նոր ընտանիքներ։

Ներգաղթածները չկարողացան այնուհետև նոր բնակավայրերում անաղարտ պահել իրենց հայրենիքից բերած սովորությունները, մանավանդ, որ եկել էին ոչ թե ամբողջական համայնքներով, այլ առանձին ընտանիքներով կամ ընտանիքների խմբերով, որոնք հաճախակի տարբեր գյուղերից լինելով՝ իրարից տարբերվում էին նիստ ու կացով և բարբառով։ Շատ կարճ ժամանակ անցած սկսեց նկատվել տեղական շենքերի ձևերի, զգեստի, տնային իրերի ազդեցությունը նրանց վրա, մանավանդ այնպիսի վայրերում, ինչպես Սիսավան (Ղարաքիլիսա), Ուզ, որտեղ նրանք տեղավորվել էին բուն սյունական ծագում ունեցող բնակիչների բազմամարդ գյուղերի՝ Բրունակոթ, Ախլաթյան, Շենաթաղ (այժմ (Լեռնաշեն), կողքին և որտեղ նրանց և այդ բնակիչների մեջ արագ հաստատվեցին հաճախակի խնամիական կապեր։ Մերձեցմանն այստեղ էլ, ինչպես և այլ հայկական գավառներում նման դեպքերում, շատ էր նպաստում այն, որ նորեկները ներգրավվեցին տեղական սրբավայրերի պաշտամունքի մեջ՝ տեղական սուրբ ծառերը, աղբյուրները, այրերը, լեռնագագաթները, նահատակների գերեզմանները, եկեղեցական սրբությունները և այլն դարձան և իրենց համար ուխտագնացության առարկաներ։ Սակայն մինչև այսօր էլ թե բարբառների և թե սովորությունների մեջ նկատվում է պարզորոշ տարբերություն։ Դա օգնում է ազգագրագետին տեղում ձևավորված կենցաղային երևույթը դրսից մտածից զանազանելու։ Վերաբնակվածների բերած մի քանի հատկանշական իրերն արդեն կարողացել են ներթափանցել տեղացի ընտանիքները, այսպես օրինակ՝ Ուզ գյուղում բուրդ գզելու աղեղը կամ խորհրդավոր զարդերով՝ կանանց կամ տղամարդկանց սեռանդամներով նախշած աղամանները։

Բացի հայ գաղթականներով գավառը բազմամարդացնելուց, որ համապատասխանում էր այն ժամանակ Անդրկովկասում վարած ռուսական քաղաքականությանը, մելիքական տները ձեռնպահ չմնացին ռուսական տիրապետության հաստատման և սահմանների ընդարձակման համար մղվող պատերազմական գործողություններից։ Այսպես՝ Տաթևի մելիք Մանուչարի եղբայրը՝ Ռուստամ-բեկ Օրբելյանը իր հավաքած կամավորներով միացավ ռու-